53-ՐԴ ՆԻՍՏ

28 դեկտեմբերի 1918թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 7-ին, նախագահությամբ *Ա. Սահակյանի.* մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը, խնամատարության, լուսավորության և իրավարարության մինիստրները:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Զեկուցում է որբանոցների, որբանոցային հիվանդանոցների պահպանման և կահավորման համար խնամատարության մինիստրի առաջարկած օրինագծի և նախահաշվի մասին:

Որոշվեց նախահաշիվը հետ դարձնել խորհրդարանի ֆինանսական ու բժշկական հանձնաժողովներին՝ լրացնելու և հաջորդ նիստին խորհրդարան ներկայացնելու:

Նույնը զեկուցում է հունվարյան արձակուրդի ընթացքում անակնկալ ծախքերի համար կառավարությանը մի միլիոն ռ. ավանս տալու օրինագծի մասին:

Նկատի ունենալով, որ խորհրդարանի արձակուրդի լուրը ոչ մի հիմք չունի, որոշվում է այդ օրինագիծը չքննել և բոլորովին դուրս ձգել օրակարգից:

Նույն Գ. ընթերցումով զեկուցում է քաղաքի միլիցիան և քաղաքային դպրոցները պահպանելու համար քաղաքային ինքնավարությանը նպաստ տալու առաջարկի մասին:

Խորհրդարանն ընդունեց առաջարկը և հանձնեց խմբագրական հանձնաժողովին:

Ս. Վրացյան - Զեկուցում է թյուրքահայերի Բ համագումարը կազմակերպելու համար 35.000 ռ. նպաստ տալու առաջարկի մասին:

Խորհրդարանը միաձայն ընդունում է առաջարկը և հանձնում խմբագրական հանձնաժողովին:

Ն. Աղբալյան - Զեկուցում է լուսավորության մինիստրության նախահաշվի մասին:

Խորհրդարանը հաստատում և հանձնում է խմբագրական հանձնաժողովին:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 12-ին:

«Զանգ», 17 հունվարի 1919թ.